Գավառի ավագ դպրոց

Հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների

վերապատրաստման դասընթաց

Հետազոտական աշխատանք

Թեմա՝ ՄԻՋԱՆՁՆԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ

Հետազոտող ուսուցիչ՝ ԳԱՅԱՆԵ ՄԱՐԳԱՐՅԱՆ

Ղեկավար՝ ԺԵՆՅԱ ՄԻՐԻԲՅԱՆ

Գավառ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ……...3

ԳԼՈՒԽ I. ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ԷՈՒԹՅՈՒՆԸ

1.1 Կրտսեր դպրոցականի հաղորդակցման վերաբերյալ տեսական մոտեցումները…….5

1.2 Հաղորդակցման դերը կրտսեր դպրոցականի կյանքում……8

ԳԼՈՒԽ II.ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՂՈՐԴԱԿՑԱԿԱՆ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԵԹՈԴԻԿԱՆԵՐԻ ԸՆՏՐԱԿԱԶՄԸ: ՍՏԱՑՎԱԾ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՔԱՆԱԿԱԿԱՆ ԵՎ ՈՐԱԿԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

2.1 Հետազոտության կազմակերպումը, մեթոդիկաների համառոտ բնութագիրը՝ արդյունքների մշակում և քանակական վերլուծություն……9

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ……21

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Տարրական դպրոցը՝ դպրոցականի ընդհանուր կրթական գործընթացում թերևս ամենակարևոր փուլն է: Ուսումնառության չորս տարիների ընթացքում աշակերտը ոչ միայն պետք է յուրացնի առարկայական ծրագրերով նախատեսված նյութերը, այլև սովորի սովորել և սովորեցնել նաև ուրիշներին: Սովորի սովորեցնել ինքն իրեն՝ սա է տարրական դպրոցի հիմնական խնդիրը:

Հետազոտության նպատակն է՝ ուսումնասիրել կրտսեր դպրոցականների խոսքը և նրա ակտիվության աստիճանը միջանձնային հարաբերությունների ընթացքում և հաղորդակցական հմտությունների ձևավորման և զարգացման առանձնահատկությունները:

Կրտսեր դպրոցական տարիքային փուլին բնորոշ է շրջապատի մարդկանց հասկանալու, իր վարքը կառավարելու կարողությունը, որի հիման վրա էլ կառուցվում է հասակակիցների և մեծահասակների հետ իր հարաբերությունները: Տարրական դպրոցում տարբեր առարկաներ ուսումնասիրելով՝ աշակերտը իր տարիքին բնորոշ հնարավորության սահմաններում պետք է յուրացնի ճանաչողական, ստեղծագործական հմտություններ, տիրապետի հաղորդակցական և տեղեկատվական կարողությունների, պատրաստ լինի կրթության հաջորդ փուլերին:

Մեր առջև խնդիր էր դրված՝

- Ուսումնասիրել կրտսեր դպրոցականների տարիքային առանձնահատկությունները:
- Վեր հանել կրտսեր դպրոցականների շրջանում միջանձնային հաղորդակցական հմտությունների ձևավորման առանձնահատկությունները :
- Բացահայտել դասվարի դերը դպրոցական կոլեկտիվի ձևավորման գործում:
- Ուսումնասիրել կրտսեր դպրոցականների կյանքում հաղորդակցական հմտությունների ձևավորման ուղղությամբ կատարված ուսումնասիրությունները:
- Առաջարկել մեթոդիկա, որն ավելի արդյունավետ կդարձնի հաղորդակցական հմտությունների հետագա զարգացումը:

Հետազոտության իրականացման ժամանակ օգտագործվել են Գ. Ա. Ցուկերմանի 3 մեթոդիկաներ՝ «Զեռնոցներ», «Ո՞վ է ճիշտ», «Թելադրության հետքերով», որոնք ուղղված են աշակերտների հաղորդակցական ունակությունների ձևավորմանն ու զարգացմանը: Անձի հաղորդակցական կարողությունների ձևավորման գործընթացը հոգեբանական նկատառումներով առնչվում է տարիքային առանձնահատկությունների հետ:Առանց այդ առանձնահատկությունները հաշվի առնելու, երեխաների արդյունավետ ուսումնառության մասին խոսք լինել չի կարող: Կրտսեր դպրոցականների ինքնակրթության և ինքնադաստիարակության գործընթացը հենքային դեր ունի նրանց հետ տարվող աշխատանքում, որի հիման վրա ձևավորվող հաղորդակցական հմտությունները լայն հնարավորություններ են ընձեռում աշակերտներին գիտելիքներով,հմտություններով, կարողություններով զինվելու համար:

Սովորողների հաղորդակցական հմտությունների ձևավորումն ու զարգացումը նպաստում է կրտսեր դպրոցականների արդյունավետ ուսումնառության կազմակերպմանը՝ելնելով նրանց ֆիզիկական և հոգեբանական պատրաստվածության աստիճանից:

Աշխատանքը կազմված է ներածությունից, երկու գլուխներից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից:

ԳԼՈՒԽ I. ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ԷՈՒԹՅՈՒՆԸ

1.1 Կրտսեր դպրոցականի հաղորդակցման վերաբերյալ տեսական պատկերացումները

Խոսքային և հուզական շփումը: Դպրոցը երեխայի առջև դնում է խոսքի զարգացման նոր պահանջներ՝ դասի ժամանակ նրա պատասխանը պետք է լինի հակիրճ, հստակ, արտահայտիչ, հաղորդակցման ժամանակ խոսքի կառուցվածքը պետք է համապատասխանի մշակույթում ձևավորված նորմերին: Միայն դպրոցում երեխան առանց ծնողի հուշումների (օրինակ՝ «Ասա շնորհակալություն», «կարելի՞ է Ձեզ հարց ուղղել» և այլն), այս կամ այն իրավիճակում ստիպված է ինքնուրույն կարողանա կառուցել իր խոսքը այնպես, որպեսզի հաղորդակցման մեջ մտնի ուսուցիչների և հասակակիցների հետ, մասնակից լինի զանազան ուսումնական իրավիճակների:

Խոսքային կուլտորայի էությունը այն է, որ երեխան կարողանա ճիշտ և տեղին արտաբերել իր մտքերը, հասկանա հասակակիցների և ուսուցչի խոսքը: Միայն հաղորդակցման արդյունավետ միջոցների յուրացմամբ և օգտագործմամբ է պայմանավորված շրջապատող մարդկանց վերաբերմունքը երեխայի նկատմամբ: Մարդկանց հաղորդակցումը դառնում է սոցիալական հարաբերությունների յուրահատուկ դպրոց: Երեխան դեռ անգիտակցորեն բացահայտում է իր համար հաղորդակցման տարբեր ոճերի գոյությունը: Հաղորդակցումը մեր կյանքի կարևորագույն բաղադրիչներից է: Մենք ամեն օր շփվում ենք տարբեր մարդկանց հետ՝ մեր նպատակներին հասնելու համար: Հաղորդակցման գործընթացում հաջողության հասնելու կարողությունը, շփման ակտիվությունը նպաստում են մարդու կյանքի տարբեր ոլորտներում ճիշտ կողմնորոշվելու:

Փոխազդեցության ձևը կապված է այն միջոցներից, որոնք օգտագործվում են մարդկանց հասարակական հաղորդակցման գործունեության ընթացքում՝ որպես արտաքին միջավայրի ,այլ մարդկանց հետ փոխգործունեության երեք ծրագրերից մեկը: Մարդու գործունեության ոլորտները տարբերակվում են, առաջին հերթին, կապված մարդու կենսագործունեության ուղղվածության կամ ընդհանուր նպատակի իրագործման հետ: Այսպես, մարդու գործունեության ընդհանուր նպատակը ներառում է

սեփական անձի կայացում և ինչ-որ բանի ստեղծում իր անձից դուրս, իր կամ ուրիշների համար: Կարելի է առանձնացնել նպատակների երեք խումբ՝

- նյութական և բարոյական մշակույթի արժեքների ստեղծում,
- գիտելիքի յուրացում և կիրառում
- ընկալում և մտքերի փոխանակում:

Առաջին երկու խմբերի նպատակների իրագործվում է ընդհանուր հոգևոր պահանջմունքի բավարարման համար: Հետևաբար պայմանականորեն սահմանվում են երեք փոխկախկապակցված և փոխհամաձայնեցված գործունեության ոլորտներ՝ հասարակական-արդյունաբերական, կրթական և հասարակական-կոմունիկատիվ: Նմանատիպ գործունեության ձևեր է առաջ քաշում Բ. Գ. Անանևը, այս հարցին մոտենալով, հիմնվելով սուբյեկտի ստրուկտուրայի տեսանկյունին: Համաձայն որի՝ մարդու մեջ աշխատանքի, իմացության և հաղորդակցման համակարգումը որոշում է մարդու ընդհանուր համակարգը որպես գործունեության սուբյեկտ և անձնավորություն:1

Հաղորդակցման սուբյեկտը կրում է իր սեփական ֆունկցիոնալ բեռնվածությունը և դիտարկվում է որպես հաղորդակցման տարբեր ֆունկցիաների սկզբնական իրագործող: Այսպես, համաձայն Ա. Ա. Բրուդնիի կոմունիկացիայում (հաղորդակցման մեջ) կարող են ընդգծվել երեք սկզբնական ֆունկցիա՝ ակտիվացնող(դրդում է գործողության), ինտերդիկտիվ (արգելում՝ կարելի է - չի կարելի), ապակայունացնող (սպառնալիքներ, վիրավորանքներ), և հաղորդակցման չորս հիմնական ֆունկցիաներ՝ ինստրումենտալ (հաղորդակցման միջոցով գործունեության ուղորդում), սինդիկատիվ (խմբի միասնականության ստեղծում), ինքնաարտահայտում, տրանսլյացիոն:2 Վերջինը մեծ հետաքրքրություն է առաջացրել մանկավարժական հաղորդակցման համար, քանի որ այդ ֆունկցիան ընկած է կրթության հիմքում, հաղորդակցման միջոցով է տեղի ունենում անձնավորության ուսուցումը, ինչպես ինստիտուտացիոն, լիազորված և պետության կողմից կազմակերպված, այնպես էլ

1 https://ru.wikipedia.org/wiki/Ананьев,_Борис_Герасимович/ Основные научные труды

2https://ru.wikipedia.org/wikiБрудный,_Арон_Абрамович#Аксиальная_и_ретиальная_коммуникация

անհատական, ոչ ֆորմալ ուսուցումը, որը տեղի է ունենում մարդկանց հետ հաղորդակցման պրոցեսում, որոնք կարող են տվյալ անձին փոխանցել իրենց հմտություններն ու ունակությունները:[3]

Հաղորդակցման ֆունկցիաների առավել մանրամասն վերլուծությունը հնարավորություն է տալիս տարբերակել կոնտակտային, ինֆորմացիոն, դրդող, համակարգող, ընկալման ֆունկցիան, էմոտիվ ֆունկցիան, կապի ստեղծման և ազդեցության ֆունկցիան (Լ.Ա.Կարպենկո):[4] Ուսումնասիրելով վերբալ հաղորդակցումը՝ Ռ. Յակոբսոնը առանձնացրեց հաղորդակցման հիմնական վեց ֆունկցիաներ, որոնք էականորեն լրացնում են լեզվի երեք հիմնական ֆունկցիան, որոնք դեռ 40-ական թթ. առանձնացրել էր Ն. Ս. Տրուբեցկին (էկսպլիկատիվ, ապելյատիվ, էկսպրեսսիվ): Ըստ Յակոբսոնի՝ խոսքի հիմնական ֆունկցիաներն են՝

1. Էմոտիվ (էքսպրեսիվ, աֆֆեկտիվ)՝ խոսողի վերաբերմունքը լսողի նկատմամբ (Ցավում եմ, ինչպիսի անհաջողություն, Նորից անձրև եկավ):

2. Կոնատիվ՝ խնդրանք, հրաման, որը հասցեագրվածին դրդումտ է գործողության:

3. Ռեֆերենցիոն (կոգնիտիվ, նշող)՝ մտքերի արտահայտում:

4. Հեղինակային (դերասանական)՝ իրականի և մտածածի սահմանազատում:

5. Ֆատիկային՝ հաղորդակցման պահպանում (օրինակ՝ Ալլո, ինչպե՞ս եք:)

6. Մետալեզվական՝ սեփական արտադրությունների վերահսկում, ճշտում:

Խոսքային ֆունկցիաները այլ կերպ է նկարագրում Մ.Խոլլիդեյը: Հետևելով իր տղայի խոսքի զարգացմանը, նա առաջ քաշեց խոսքային վարքի վեց ֆունկցիա՝ ինստրումենտալ (նյութական պահանջմունքների բավարարում), կարգավորող (շրջապատի մարդկանց վարգի վերահսկում), փոխգործող (կոնտակտի պահպանում), անձնական (սեփական անձին պահանջների ներկայացում), էվրիստիկ կամ որոնողական (ինչո՞ւ), երևակայական (ներքին աշխարհ), ինֆորմատիվ (նոր ինֆորմացիայի հաղորդում): Ակնհայտ է խոսքային ֆունկցիաների

3 Обхуова Л. Ф. “Возрастная психология” Москва «Издательство Юрайт» 2011;

4 Карпенко Л.А. “Категориальный анализ понятий общение и коммуникация“, Мир психологии : научно-методический журнал, №4 октябрь-декабрь 2006. – с. 77-85

բազմակողմանիությունը: Կարևոր է այն, որ նրանք լայն կիրառվում են մանկավարժական հաղորդակցման ինտերպրիտացիաների ժամանակ, արտացոլելով կոմունիկատիվ փոխգործողության տարբեր կողմերը: 5

Կախված հաղորդակցման ուղղվածությունից առանձնացնում են հաղորդակցման աքսիալ և ռետիալ տեսակները: Աքսիալ հաղորդակցման առանձնահատկությունները հիմնականում կիրառվում են անմիջապես միջանձնային հարաբերությունների ժամանակ, իսկ զանգվածային հաղորդակցումը օգտագործում է ռետիալ հաղորդակցման մոդելները:

1.2 Հաղորդակցման դերը կրտսեր դպրոցականի կյանքում

Վերջին ժամանակներս ավելի հաճախ ենք լսում այն միտքը, որ կրթության մեջ գլխավորը ոչ թե գիտելիքն է, այլ յուրաքանչյուր աշակերտի կողմից գիտելիքների ստեղծման, տեղեկատվության մշակման համար անհրաժեշտ միջոցներին տիրապետումը. <<Դպրոցում գլխավոր տեղը կգրավի այն բովանդակությունը, որն ուղղված է մարդու մեջ որոշակի հատկանշական որակների՝ մտահասությունների ձևավորմանը, որոնք պահանջվում է դաստիարակել:

Արդի հոգեբանության մեջ հաղորդակցությունը դիտվում է որպես կենսագործունեության ձև, սոցիալական փորձի ու մշակութային արժեքների փոխանցման միջոց: Այն նաև մարդկանց միջև տեղի ունեցող խոսքային փոխազդեցություն է, որը կարող է տեղի ունենալ անմիջական/ հիմնականում՝ խոսքի միջոցով/ կամ միջնորդավորված ձևով: Երկխոսությունն էլ հաղորդակցության ակտիվ տեսակներից է:

Հաղորդակցական գործառույթը ենթադրում է խոսքային և ոչ խոսքային հաղորդակցում: Շփման ու հաղորդակցման արժեքային կողմը բնութագրում է մարդու՝ այլոց հետ համակեցության, սոցիումում դրսևորվելու, մարդկանց հետ շփվելու պահանջմունքը: Այս պարագայում հատուկ նշանակություն են ձեռք բերում խոսքային հաղորդակցման մշակույթը, լեզվական միջոցներով զրուցակցի վրա ներգործելու ունակությունը: Հաղորդակցական կարողության դրսևորումն այն է, որ կրտսեր

5 Обхуова Л. Ф. “Возрастная психология” Москва «Издательство Юрайт» 2011;

դպրոցականը կարողանում է լսել, ընկալել, բանավիճել, համարժեք վերաբերմունք արտահայտել և տրամաբանված խոսք կառուցել: Ըստ Ս. Տ. Մասլովի՝ շփման ու հաղորդակցման արժեքները վերաբերում են արժեքները վերաբերում են արժեքների սոցիալական խմբին:[6] Քաղաքավարությունն ու բարեկրթությունը՝ որպես արժեքային հասկացություններ, բնութագրում են անձի՝ շրջապատող մարդկանց նկատմամբ հարգալից հարաբերություններ ձևավորելու ձգտումը: Ըստ Վ.Ս. Լեդնևի՝ ուսումնական յուրաքանչյուր առարկա զարգացնում է աշակերտի անձի որևէ կողմը, հետևաբար ուսումնական առարկաների հուզական արժեքային բաղադրատարրի բովանդակությունը տարբեր է ըստ դրանց դերի և գործառույթների: Այս տեսանկյունից հետազոտողների կողմից առաջարկվել են ուսումնական առարկաների դասակարգումներ ըստ դրանց գործառույթների: Մայրենի և օտար լեզուների ուսումնական առարկաներում, ըստ Վ. Ս. Լեդնևի, առանձնացվում են հաղորդակցման գեղագիտական կողմերը ընթերցանության համար նախատեսված գեղարվեստական տեքստերի հիման վրա: Կրտսեր դպրոցականների զարգացման իմացական-ճանաչողական և հաղորդակցական գործունեությունը նպաստում է նրանց իմացական ու սոցիալական արժեքների ձևավորմանը:

ԳԼՈՒԽ 2. ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՄԱՍ

2.1 Հետազոտության կազմակերպումը, մեթոդիկաների համառոտ բնութագիրը՝ արդյունքների մշակումը և քանակական վերլուծությունը

Հետազոտությունը իրականացվել է Հայրավանքի միջնակարգ դպրոցում՝ կրտսեր դպրոցում /1-4-րդ դասարաններում/: Սակայն հետազոտության հիմնական կորիզը

կազմել են երկրորդ և երրորդ դասարանի 8-9 տարեկան 32 աշակերտներ: Տարիքի ընտրությունը պատահական չէր, քանի որ հենց այդ տարիքում է առավել արդյունավետ ձևավորվում հաղորդակցության ունիվերսալ կրթական գործունեությունը, քանի որ առաջին դասարանցիները 6-7 տարեկան են և ընկնում են 7 տարեկանի ճգնաժամի մեջ, իսկ չորրորդ դասարանցիները համարվում են

[6] Маслова В.М. ՝Роль внутрикорпоративных коммуникаций в компании՝, Научний альманах, 2015.11.01.370

տարրական դպրոցի շրջանավարտները՝ տարրական դպրոցից անցում են կատարում միջին դպրոց (10 տարեկան):

Առաջին դասարանում կապակցված խոսքի ստեղծումը խոսքի զարգացման ուղղությամբ տարվող աշխատանքների բարձրակետն է, որովհետև այդ ուղղությամբ տարվող աշխատանքների վերջնական նպատակը կապակցված խոսք ստեղծելու աշակերտների կարողության ձևավորումն է: Հենց այս խոսքն էլ սովորաբար հարուստ է լինում խոսքի բոլոր տեսակներով, և բնագրի շուրջ այս ուղղությամբ ստեղծագործական-որոնողական աշխատանքը կարող է արդյունավետ լինել: Խոսք կառուցելու կարողության ձևավորման տեսակետից օգտակար են դասագրքում եղած թեմատիկ նկարների շուրջ կապակցված պատմությունների ստեղծումը, տեսածի, լսածի, զգացածի ու խորհածի վերարտադրումը: Այս բոլոր դեպքերում երեխաները ստիպված են լինում կապակցված ձևով ու որոշակի համակարգով պատմել, խոսք կառուցել: Այս իմաստով բնականաբար, ուսումնասիրվող յուրաքանչյուր նյութ աշակերտներն ամբողջությամբ վերարտադրում են, որպեսզի սովորեն ստեղծագործության մեջ ներկայացված դեպքերի և դեմքերի տրամաբանական զարգացմանը, կարողանան կապակցված ու ավարտուն մտքեր արտահայտել: Բանավոր խոսքի կառուցման և այդ խոսքում գնահատող ու դատողական մտքերը գործածելու կարողության ձևավորմանը մեծապես նպաստում են ուսուցչի խոսքը և աշակերտներին ուղղված նրա հարցերն ու առաջադրանքները: Հայտնի է, որ ուսուցչի խոսքը աշակերտների համար նմուշօրինակ է, և նա երբեմն, անգամ ինքնաբերաբար, կրկնում է ուսուցչին, նրա դատողությունները, որոնք աստիճանաբար դառնում են սեփական ոճ: Այս ամենը ընդհանրացվում է աշակերտների հաղորդակցման ձևավորմամբ: Երեխաների միջև դասի ընթացքում միմյանց հետ շփվելը, նույնիսկ միմյանց ընդհատելը դառնում են հստակ հաղորդակցման ձևավորման խթան:

Առաջին դասարանում հաղորրդակցական հմտությունների ձևավորմանն են ուղղված գրական ունկնդրման ժամերը: Սրանց հիմնական նպատակը լավ ընթերցող ձևավորելն է: Ընթերցանությունը անմիջականորեն ազդում է երեխաների խոսքի ձևավորման վրա:

Անդրադարձը խոսքի կառույցներին կարևոր է, որովհետև բազմաթիվ են այն

դեպքերը, երբ երեխան կապակցված խոսքով խուսափում է ներկայացնել իր մտքերը՝ ամաչում է, կաշկանդվում է:

Խոսքի զարգացման համար բացառիկ կարևոր նշանակություն ունի հարուստ բառապաշարը: Իսկ բառապաշարի հարստացման համար պետք են մի շարք նախադրյալներ: Դրանցից են ուսուցչի գրագետ խոսքը, գրքի տեքստերը, դրանց շուրջ բազմաշերտ աշխատանքը: Սակայն սրանք պասիվ գործոններ են և ինքնաբերաբար չեն զարգացնում սովորողի խոսքը: Հարկավոր է խոսքի բարձր ակտիվություն, այնպիսի պայմանների և միջավայրի ստեղծում, որտեղ երեխան ունենա խոսելու և գրելու պահանջ (էքսկուրսիաներ՝ զուգակցված զրույցներով, տարբեր խաղերի կազմակերպում, դերային ներկայացումներ), այդ ամենի համար հատուկ բառապաշարի կուտակում, որի հիմնական աղբյուրը ընթերացանությունն է: «Կարդալ կնշանակե մտածել: Բացի աչքից ու բերանից, ընթերցանության ժամանակ հոգին նույնպես պիտի ի գործողություն գրգռվի: Մարդս ընթերցանելիս պիտի մտածե, նա ընթերցածը պիտի հասկանա և, եթե հասկանում է, նա այդ պիտի ապացուցե յուր ընթերցանության գեղեցկությամբ», - ասում էր Բահաթրյանը:7

Անառարկելի է՝

3, համարձակ մտքեր արտահայտելու, դատողություններ անելու համար մարդը նախևառաջ վստահություն պիտի ունենա:

Ջ.Գյուլամիրյանն աշակերտներին ակտիվ խոսքային գործունեության /հաղորդակցման/ մեջ ներգրավելու խնդրի արդյունավետ լուծումը տեսնում է դասարանում վստահելի, անկաշկանդ մթնոլորտ ստեղծելու, ինչպես նաև յուրաքանչյուրի խոսքի իրավունքը հարգելու մեջ (Գյուլամիրյան «Խոսքի զարգացում» 2014թ.): Առաջնորդվելով այս դիրքորոշմամբ՝ դասավանդվող դասարաններում յուրաքանչյուր նյութի շուրջ խոսելիս կարևոր է.

- վստահելի մթնոլորտի ստեղծումը,
- յուրաքանչյուրին մինչև վերջ լսելու կարգը,
- խոսողին անընդհատ դիտողությունները չանելը,
- անհրաժեշտ բառամթերքով խթանելը,

7 Ջ. Գյուլամիրյան «Խոսքի զարգացում» 2014թ. Երևան

- խոսքի նյութի շուրջ տեղեկատվություն հավաքելը,

- խոսքի նյութի համապատասխանությունը ծրագրին և տվյալ դասարանի աշակերտների հետաքրքրություններին ու մտավոր կարողությունների համապատասխան:8

Գրեթե միշտ աշխարհաճանաչողական տեղեկությունների ձեռքբերումն իրականացվում է ակտիվ երկկողմանի զրույցով՝ երեխաների իմացածը թարմացնելու, անհատական դիտումների շնորհիվ ձեռք բերվածը գիտակցելու աշխատանքից՝ անցնելով նոր տեղեկությունների հաղորդմանը: Այսպիսով, իմացածի և նոր ձեռք բերածի միջև որոշակի կապ է ստեղծվում և ճանաչումն ավելի ամբողջական ու կատարյալ է դառնում: Հենց այս գործընթացի ժամանակ էլ աշակերտները սովորում են խոսք կառուցել: Ընդօրինակելով մեծերի խոսքը՝ աշակերտները արտահայտվելիս գործածում են խոսքի տարբեր տեսակներ, սովորում են ինքնուրույն արտահայտել սեփական կարծիքը: Այս ամենը ուսուցում և ամրապնդվում է խաղերի հենքի վրա՝ « Խաղում ենք սովորելով, սովորում ենք խաղալով»:

Հաղորդակցական կարողությունների զարգացմանն ուղղված աշխատանքն ավելի խորացված կատարվում է հաջորդ դասարաններում, եթե առաջին դասարանում հաղորդակցումը միայն բանավոր հենք ունի,ապա երկրորդ դասարանում այն արդեն իրականացվում է նաև գրավոր: Երկրորդ դասարանից սկսած հաղորդակցումն ավելի արդյունավետ դարձնելու նպատակով պետք է ուշադրություն դարձնել խոսքի ճիշտ կառուցմանը, բառապաշարը հարստացնելուն անծանոթ բառերով, օգտագործել բանավոր խոսքում, հորինել պատմություններ, վարել երկխոսություններ:

Կրտսեր դպրոցական տարիքում հաղորդակցական հմտությունների ձևավորման խնդրի հետ կապված տեսական հետազոտությունների անցկացման ժամանակ հաստատվեց, որ հաղորդակցական հմտությունները և դրանց հիման վրա զարգացող անձի հաղորդակցական-կողմնորոշված բնութագրերը ու գծերը ներկայումս համարվում են սոցիումի կրթական ոլորտի հրատապ պահանջ: Կապված դրա հետ օբյեկտիվ պահանջը հոգեբանա-մանկավարժական համայնքի ուշադրությունը կենտրոնացնում է դաստիարակչական-կրթական գործընթացի

8 Ջ.Գյուլամիրյան «Խոսքի զարգացում» 2014թ. Երևան

արդյունավետ պայմանների որոնման վրա (այդ թվում նաև արտադպրոցական գործունեության մեջ): Ժամանակակից աշակերտը ոչ միայն պետք է կենտրոնացած լինի գիտելիքների, ունակությունների և հմտությունների որոշակի ծավալի յուրացման վրա, այլ նաև օժտված լինի միջանձնային հաղորդակցությունը և ցանկացած ոլորտում ինքնիրացման և ինքնարդիականացման համար անհրաժեշտ ստեղծագործական փորձի ստացման համար արդյունավետ փոխգործունեություն ապահովելու որակներով:

Կրտսեր դպրոցականների հետ աշխատանքում կան շատ խնդիրներ: Դրանցից մեկը և, կարելի է ասել, ամենակարևորը, համարվում է հաղորդակցական հմտությունների զարգացումը, դիմելաձևը, օգնության խնդրանքը, գործընկերոջ հուզական վիճակի գնահատման հմտությունը, կառուցողական և դրական փոխգործունեությունը, սեփական անձի և մյուսների նկատմամբ դրական վերաբերմունքը, երախտագիտությունը: Հաղորդակցական հմտությունները երեխայի զարգացման, նրա սոցիալականացման և անհատականացման, անձի ձևավորման կարևոր պայմանն են համարվում: Շփման մեջ երևում են մարդկանց միջանձնային և հասարակական հարաբերությունները (Բ. Գ. Անանև, Մ. Մ. Բախտին, Ա. Ն. Լեոնտև, Ա. Ն. Ռուբինշտեյն):

Հաղորդակցական հմտությունների ձևավորման և զարգացման առավել արդյունավետ միջոցներ են համարվում ժամանակակից նորարարական մանկավարժական տեխնոլոգիաները: Համակարգի իրականացման դեպքում ամենակարևորը այն է, որ զարգանում է ստեղծագործական ակտիվությունը և ինքնուրույնությունը, հենց երեխաների հաղորդակցության հմտությունները, ինչպես նաև ուժեղանում է նրանց սոցիալականացման գործընթացը:

Կրտսեր դպրոցական տարիքում հաղորդակցական հմտությունների ձևավորումը տեղի է ունենում առանց ընդհատումների. և՛ դասի ժամին, և՛ դասամիջոցին, և՛ դասից դուրս, և՛ տանը: Ուսուցչի կողմից օգտագործվող ձևավորման մեթոդները և միջոցները տարբեր են: Առավել արդյունավետ են համարվում ժամանակակիցն նորարարական մանկավարժական տեխնոլոգիաները, օրինակ, քննադատական մտածողության զարգացման տեխնոլոգիան թույլ է տալիս զարգացնել և ձևավորել հաղորդակցական ունիվերսալ կրթական գործունեություն

կրտսեր դպրոցական տարիքում՝ օգտագործելով տարբեր եղանակներ: Այս տեխնոլոգիան բաց է կրթական ոլորտում մեծ շրջանակով խնդիրների լուծման համար: Դրա մեջ սինթեզված են ուսուցման կոլեկտիվ և խմբային միջոցների տեխնոլոգիաների գաղափարները և մեթոդները, ինչպես նաև զարգացնող ուսուցման համագործակցության, այն համարվում է ընդհանուր մանկավարժական, առարկայական:

Վերոնշյալից հետևում է, որ կրտսեր դպրոցականների մոտ հաղորդակցական կարողությունների ձևավորման ժամանակ անհրաժեշտ է մանրամասն մշակել կրտսեր դպրոցական տարիքում հաղորդակցական կարողությունների ձևավորման ծրագրեր:

Հետազոտության փորձարարական մասի նպատակն է մշակել և փորձարկել կրտսեր դպրոցական տարիքում հաղորդակցական կարողությունների ձևավորման ծրագիրը:

Այդ նպատակին հասնելու համար անհրաժեշտ է լուծել հետևյալ խնդիրները.

1. Որոշել կրտսեր դպրոցական տարիքում հաղորդակցական կարողությունների զարգացման արդիական մակարդակը (հաջողության հասնելու պահանջները),

2. Ստացված տվյալների վերլուծության հիման վրա մշակել և փորձարկել տարրական դպրոցի աշակերտների հաղորդակցական կարողությունների ձևավորման ծրագիրը արտադպրոցական ժամերին:

3. Որոշել կրտսեր դպրոցական տարիքում հաղորդակցական կարողությունների ձևավորման մշակված ծրագրի արդյունավետությունը:

Հետազոտության կառուցվածքի մեջ դրված խնդիրները լուծելու համար առանձնացվել են երկու փուլեր.

1. Արձանագրող փուլ՝ 2021թ. փետրվար: Նպատակը. որոշել կրտսեր դպրոցական տարիքում հաղորդակցական հմտությունների զարգացման մակարդակը տվյալ պահին:

2. Ձևավորող փուլ՝ 2021թ. սեպտեմբերից մինչև 2022թ. փետրվար: Նպատակը. մշակել և փորձարկել կրտսեր դպրոցական տարիքի երեխաների փորձարարական խմբում հաղորդակցական կարողությունների ծրագրերը:

3. Ստուգիչ փուլ՝ 2022թ. մարտ: Նպատակը՝ կրկնակի գնահատել հաղորդակցական հմտությունների ձևավորվածության մակարդակը կրտսեր դպրոցական տարիքի երեխաների փորձարարական խմբերում:

Գիտական գրականության վերլուծության հիման վրա տեսական հետազոտության մեջ կրտսեր դպրոցական տարիքում հաղորդակցական կարողությունների ձևավորվածության չափանիշներն են.

- ուսուցչի և հասակակիցների հետ կրթական համագործակցության նախագծումը՝ նպատակների, խնդիրների որոշում, մասնակիցների գործառույթների, նրանց փոխգործունեության միջոցների բաշխում,

- կոնֆլիկտները լուծելու ունակություն՝ խնդրի բացահայտում, նույնականացում, կոնֆլիկտի լուծման այլընտրանքային միջոցների որոնում և գնահատում, որոշման ընդունում և դրա կատարում, դասընկերոջ գործունեության կազմակերպում և նրա վարքագծի կառավարում՝ նրա գործողությունների վերահսկողություն, գնահատում, ուղղում,

- գրագետ հարց տալու ունակություն՝ ակտիվ համագործակցություն տեղեկատվության հավաքման և որոնման գործընթացում, սեփական մտքերի լիարժեք, գրագետ և ճշգրիտ արտահայտում՝ հաշվի առնելով հաղորդակցության նպատակները, խնդիրները և պայմանները, մենախոսության և երկխոսության ձևերի տիրապետումը՝ համապատասխան մայրենի լեզվի քերականական և ուղղագրական նորմերին:

Զարգացման մակարդակը ըստ առանձնացված չափանիշների որոշելու համար օգտագործվել են աղյուսակ 1-ում ներկայացված մեթոդիկաները:

Աղյուսակ 1.

Կրտսեր դպրոցական տարիքում հաղորդակցական հմտությունների ձևավորվածության մակարդակի որոշման մեթոդիկաները.

Հաղորդակցական հմտություն	*Մեթոդիկա*
Ուսուցչի և հասակակիցների հետ կրթական համագործակցութան նախագծումը՝ նպատակների,	«Ձեռնոցներ» մեթոդիկա Գ. Ա. Ցուկերման

խնդիրների որոշում, մասնակիցների գործառույթների, նրանց փոխգործունեության միջոցների բաշխում	
Կոնֆլիկտները լուծելու ունակություն՝ խնդրի բացահայտումը, նույնականացում, կոնֆլիկտի լուծման այլընտրանքային միջոցների որոնում և գնահատում, որոշման ընդունում և դրա կատարում, գործընկերոջ գործունեության կազմակերպում և նրա վարքագծի կառավարում՝ նրա գործողությունների վերահսկողություն, գնահատում, ուղղում	«Ո՞վ է ճիշտ» մեթոդիկա Գ. Ա. Ցուկերման
Գրագետ հարց տալու ունակություն՝ ակտիվ համագործակցություն տեղեկատվության հավաքման և որոնման գործընթացում, սեփական մտքերի լիարժեք, գրագետ և ճշգրիտ արտահայտում՝ հաշվի առնելով հաղորդակցության նպատակները, խնդիրները և պայմանները	«Թելադրության հետքերով» մեթոդիկա Գ. Ա. Ցուկերման

Այս չափանիշների հիման վրա առանձնացվել են հաղորդակցական հմտությունների զարգացման մակարդակները. բարձր, միջին և ցածր:

Բարձր մակարդակ. հաղորդակցական հմտությունների զարգացման առավել բարձր մակարդակ ունեցող երեխաներ: Սրանք շփվող, ոչ կոնֆլիկտային և ոչ ամաչկոտ երեխաներն են: Նրանք գիտեն հասարակության մեջ ընդունված շփման կանոնները և գործնականում կիրառում են դրանք: Հետաքրքրություն են դրսևորում իրենց ընկերների նկատմամբ, պատասխանատու են: Կարող են շարունակել ընդհանուր խոսակցությունը:

Միջին մակարդակ. հիմնականում անբավարար կայուն դրական փոխհարաբերություններով երեխաներն են, բայց նրանք ընդհանուր առմամբ բարյացակամ են, շփվող: Սակայն մանկավարժին կամ ընկերոջն օգնում են միայն նրանց խնդրանքով: Ոչ միշտ են կարող շարունակել ընդհանուր խոսակցությունը, պատասխանատու չեն:

Ցածր մակարդակ. ցածր է կամ բացակայում է ինչպես հաղորդակցական հմտությունների զարգացման մակարդակը, այնպես էլ բարոյական

պատկերացումների: Երեխաները խախտում են վարքագծի կանոնները, առավել արտահայտված են կոնֆլիկտային հարաբերությունները հասակակիցների հետ, դժվարություններ ունեն շփման մեջ: Չեն կարող պահել ընդհանուր խոսակցությունը, անտարբեր են:

Գ. Ա. Ցուկերմանի «Ձեռնոցներ» մեթոդիկան: Նպատակը. ուսումնասիրել համագործակցության կազմակերպման և իրականացման գործընթացում ջանքերը համաձայնեցնելու հմտության զարգացման մակարդակը: Նախատեսված է համատեղ գործունեության արդյունավետության բացահայտման, համատեղ որոշումների իրականացման, երեխաների մոտ պայմանավորվելու ունակության զարգացման, երեխաների փոխադարձ վերահսկողության իրականացման, փոխադարձ օգնություն ցուցաբերելու համար: Երեխաները միանման նախշեր են նկարում յուրաքանչյուրն իր ձեռնոցի վրա, այնպես, որ ստացվի զույգ: Երեխաները կարող են ինքնուրույն որոշել նախշը, բայց նախ նրանք պետք է պայմանավորվեն իրար հետ, թե ինչպիսի նախշ են ցանկանում նկարել:

Գ. Ա. Ցուկերմանի «Ո՞վ է ճիշտ» մեթոդիկան: Նպատակը. բացահայտել այլ մարդկանց տարբեր դիրքորոշումները տարբերելու և ընկալելու ունակության զարգացման մակարդակը, սեփական դիրքորոշումը հիմնավորելու հմտությունը, բարյացակամության ցուցաբերումը պատկերացում է տալիս զրուցակցի կարծիքը հաշվի առնելու, զրուցակցին լսելու, կոնֆլիկտները լուծելու հմտության մակարդակի մասին: Գնահատման մեթոդը զրույցն է:

Առաջադրանքի նկարագրությունը. հետազոտությունն անցկացնող մեծահասակի դիմաց նստած երեխային հերթով տրվում են երեք առաջադրանքների տեքստերը և տրվում են հարցեր: Արդյունքների որակական մեկնաբանումը թույլ է տալիս եզրակացնել երկու դիրքորոշումներից մեկի ընտրության դեպքում իրավիճակի լուծման հնարավորությունների մասին:

Գ. Ա. Ցուկերմանի « Թելադրության հետքերով» մեթոդիկան: Նպատակը. կարողանալ առանձնացնել և խոսքի մեջ արտահայտել գործողությունների էական կողմնորոշիչները, ինչպես նաև դրանք փոխանցել (հաղորդել) գործընկերոջը, նաև խոսքի պլանավորող և կարգավորող գործառույթը, ինչը թույլ է տալիս որոշել համատեղ գործունեության արդյունավետությունը, տրված խնդրի լուծման մեջ

պայմանավորվելու ունակությունը, գործունեության իրականացման մեջ փոխադարձ վերահսկողության միջոցների իրականացման կարողությունը: Դրա համար երկու երեխա նստում են սեղանի շուրջը՝ մեկը մյուսի դիմաց, նրանց միջև տեղադրվում է շիրմա, մեկին քարտի տեսքով տրվում է նախշի օրինակը, մյուսին՝ խորանարդիկներ, որոնք շարելով պետք է ստանա այդ նախշը: Առաջին երեխան թելադրում է, թե ինչպես պետք է շարվի նախշը, երկրորդը գործում է նրա հրահանգներով: Նա կարող է տալ ցանկացած հարց, բայց նրան չի թույլատրվում նայել նախշին:

Արձանագրող փուլի ժամանակ որոշվել է հաղորդակցական հմտությունների զարգացման մակարդակը ըստ վերևում նկարագրված մեթոդիկաների: Յուրաքանչուր մեթոդիկայի մեջ երեխաների պատասխանները ստորաբաժանվել են երեք մակարդակի՝ բարձր, միջին և ցածր: Ըստ հետազոտության արդյունքնեիր ստացվել են հետևյալ տվյալները: «Թելադրության հետքերով» մեթոդիկայով կատարված հետազոտությունը ցույց տվեց, որ հաղորդակցական հմտությունների զարգացման բարձր մակարդակը բնութագրական է աշակերտների 33%-ի համար: Աշակերտները կարողանում են հաջողությամբ համագործակցել միմյանց հետ, ճիշտ հարցադրումներ կատարել և հստակ, գրագետ շարադրել սեփական մտքերը, նկարները նույնն են ստացվել: Սակայն երեխաների կեսից ավելին՝ 67%, չեն կարողանում պայմանավորվել առաջադրանքը կատարելու ժամանակ, չեն կարողանում նպատակներ դնել և համատեղ ուժերով հասնել դրանց: Նրանք չկարողացան մանկավարժի օգնությամբ գործողությունը կատարել առաջին փորձից: Աշակերտների մի մասը չկարողացան բացատրել, թե ինչպես պետք է անել, իսկ մյուս մասը չկարողացավ հասկանալ , թե ինչպես պետք է կատարի առաջադրանքը և դադարեցրեց այն՝ դրանով ցույց տալով կրթական գործունեության զարգացման ցածր մակարդակը՝ 16.3%: Գ. Ա. Յուկերմանի երեք մեթոդիկաներով հետազոտության արդյունքները, որոնք ուղղված էին որոշակի հաղորդակցական հմտությունների ձևավորմանը մշակված ծրագրի իրականացման շրջանակներում, ցույց տվեցին բացառապես դրական արդյունքներ, ինչը վկայում է մշակված ծրագրի արդյունավետության մասին:

Հետազոտությանը մասնակցեցին 32 պատասխանողներ: Հաշվարկը կատարվում է առանձին ըստ յուրաքանչյուր մեթոդիկայի («Թելադրության հետքով»,

«Ո՞վ է ճիշտ», «Զեռնոցներ»), որոնք կիրառվում են կրտսեր դպրոցական տարիքում հաղորդակցական կարողությունների ձևավորման ախտորոշման համար:

Ստուգիչ փուլում մշակված և փորձարկված ծրագրի օգտագործման արդյունավետության գնահատման համար անցկացվել է կրտսեր դպրոցական տարիքում հաղորդակցական հմտությունների ձևավորվածության մակարդակի գնահատում: Գնահատումը կատարվել է նույն մեթոդիկաների օգնությամբ, ինչ արձանագրող փուլում:

Ըստ ախտորոշման արդյունքների նկատվում է բոլոր չափանիշներով հաղորդակցական հմտությունների ձևավորվածության ցուցանիշների աճ, ինչը վկայում է կրտսեր դպրոցական տարիքի երեխաների մոտ հաղորդակցական հմտությունների ձևավորման ծրագրի մշակման և փորձարկման արդյունավետ կիրառման մասին:



Գրաֆիկ 1. Յուկերմանի երեք մեթոդիկաների արդյունքների վերլուծությունը արձանագրող և ստուգիչ փուլերում

Այսպիսով, երևում է, որ կրտսեր դպրոցական տարիքում հաղորդակցական հմտությունների ձևավորվածության ցուցանիշները փորձարարական խմբում քննադատական մտածողության տեխնոլոգիաների կիրառմամբ մշակված ծրագրի ձևավորող փուլից հետո զգալիորեն բարելավվել են: Անհրաժեշտ է նշել, որ ի սկզբանե, արձանագրող փուլում երկու խմբերն ունեին մոտավորապես նույն ցուցանիշները:

Այսպես, ծրագրի կիրառումից հետո երեխաների թիվը, որոնք ունեն հաղորդակցական հմտությունների զարգացման բարձր մակարդակ, մեծացել է 6-ով, զարգացման միջին մակարդակ ունեցող երեխաների թիվը մեծացել է 12-ով, իսկ զարգացման ցածր մակարդակ ունեցող երեխաների թիվը փոքրացել է, նրանք տեղափոխվել են զարգացման ավելի բարձր մակարդակ ունեցող խմբեր:

Հետևաբար, կարելի է խոսել այն մասին, որ տվյալ հետազոտության շրջանակներում մշակված ծրագիրը համարվում է արդյունավետ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության տեսական մասի և փորձարարական մասի անցկացված վերլուծության արդյունքներով կազմվեց և փորձարկվեց կրտսեր դպրոցական տարիքի երեխաների մոտ հաղորդակցական հմտությունների ձևավորման ծրագիրը:

Հետազոտության փորձարարական մասը իրականցվել է երեք փուլով:

Առաջին՝ արձանագրող փուլում անցկացվել է կրտսեր դպրոցական տարիքում հաղորդակցական հմտությունների զարգացման պատշաճ մակարդակի գնահատում:

Վերլուծելով ախտորոշման արդյունքները՝ հաստատվել է, որ աշակերտների միայն մեկ երրորդի մոտ են հաղորդակցական կարողությունները ձևավորված բարձր մակարդակի վրա, աշակերտների կեսն օժտված է հաղորդակցական կարողությունների զարգացման անհրաժեշտ մակարդակով ըստ տարիքի պահանջների: Երեխաների մեծ մասը չեն կարողանում լսել այլ մարդկանց կարծիքները, չեն կարողանում պլանավորել այլ աշակերտների հետ համատեղ գործունեությունը և ձեռնարկել համատեղ գործողություններ դրված նպատակին հասնելու համար:

Աշխատանքի արձանագրող փուլի արդյունքներից բխում է կրտսեր դպրոցական տարիքի երեխաների մոտ հաղորդակցական հմտությունների ձևավորման անհրաժեշտությունը, որն իր հերթին բերում է ձևավորող փուլում հաղորդակցական հմտությունների մշակման և փորձարկման:

Ծրագրի իրականացման ժամանակ օգտագործվել են նախագծային, խաղային վարժություններ և առաջադրանքներ, որոնք ուղղված են աշակերտների հաղորդակցական հմտությունների ձևավորմանը:

Մշակված ծրագրի փորձարկումից հետո անցկացվել է կրտսեր դպրոցական տարիքում հաղորդակցական հմտությունների ձևավորման արդյունքների վերլուծություն:

Այսպես, մենք նշեցինք, որ կրտսեր դպրոցական տարիքի աշակերտների մոտ հաղորդակցական կարողությունների զարգացման մակարդակը արձանագրող փուլում զգալիորեն ցածր է, քան ստուգիչ փուլում: Դա հնարավոր դարձավ մշակված ծրագրի ներդրումից հետո:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ ԵՎ ՕԳՏԱԿԱՐ ՀԱՄԱՑԱՆՑԱՅԻՆ ԿԱՅՔԵՐ

1. https://ru.wikipedia.org/wiki/Ананьев,_Борис_Герасимович/ Основные научные труды

2.https://ru.wikipedia.org/wikiБрудный,_Арон_Абрамович#Аксиальная_и_ретиальная_коммуникация

3. Обхуова Л. Ф. “Возрастная психология” Москва «Издательство Юрайт» 2011;

4 .Карпенко Л.А. “Категориальный анализ понятий общение и коммуникация“, Мир психологии : научно-методический журнал, №4 октябрь-декабрь 2006. – с. 77-85

5 .Обхуова Л. Ф. “Возрастная психология” Москва «Издательство Юрайт» 2011;

6. Маслова В.М. “Роль внутрикорпоративных коммуникаций в компании“ , Научний альманах, 2015.11.01.370

7. Ջ. Գյուլամիրյան «Խոսքի զարգացում» 2014թ. Երևան

8. Ջ.Գյուլամիրյան «Խոսքի զարգացում» 2014թ. Երևան